

կորդներու միջեւ եւ կը յայտարարէ, որ եթէ անոնցմէ ոեւէ մէկը յարձակողական դիրք բռնէ ու պատերազմ յարուցէ միւսի դէմ, Մեծ Բրիտանիան իր բանակով ու նաւատորմով, իր բոլոր ոյժերով պիտի ծառանայ յարձակուողի դէմ:

Անգլիան ըրաւ այդ խոշոր քայլը երկար վարանումներէ յետոյ: Նա կ'ուզէր ըստ կարելոյն պահպանել իր աւանդական «վեհ մեկուսացումը» եւ չխառնուիլ ցամաքային պետութիւններու արիւնոտ վէճերու մէջ:

Սակայն, վերջին պատերազմը եւ կայսերական Գերմանիոյ բռնած ընթացքը ցոյց տուին, որ Անգլիոյ շահերը ամենասերտ կերպով հիւսուած են ցամաքային շահերու հետ եւ որ Գերմանիոյ յաղթութեամբ պիտի վտանգուէր եւ Մեծ Բրիտանիան (եւ ոչ միայն Մեծ Բրիտանիան, այլ անգամ... շիւսիսային Ամերիկան, որու պատերազմի բեմ նետուելու ուրոշումը հետեւանք էր գլխաւորապէս նոյն «գերման վտանգին» եւ անոր ներշնչած երկիւղներուն):

Լօբարնոյի դաշնագրութիւնը — որ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Գերմանիոյ հետ ստորագրուեցին Իտալիա, Բելգիա, Չեխոսլովակիա եւ Լեհաստան — կը հանդիսանայ պատմական խիստ ծանրակշիռ անցք մը, որ բերկրանքի ճիշդ յարուցեց քաղաքակիրթ մարդկութեան մէջ: Եւ ամենէն շատ ուրախացողը, բնականաբար, Ֆրանսան է, որ 60 տարիէ ի վեր, կ'ապրի գերմանական մշտնջենաւոր սարսափի մղձաւանջի տակ:

Բայց Լօբարնոյի դաշնագիրը կը լուծէ՞ արդեօք եւրոպական եւ համաշխարհային խաղաղութեան հարցը, կը հիմնէ՞ արդեօք կայուն, յարատեւ, անվրդովելի խաղաղութիւնը...

Տարբարխտարար, ոչ: Այդպէս կը լինէր, եթէ պետութիւնները փոխադարձ համաձայնութեամբ զինաքափ լինէին:

Սակայն, զինաթափութեան ծրագիրները, հակառակ այնքան բուռն, համաշխարհային պրոպագանդին ու պարբերական բանակցութիւններուն, կը մնան տակաւին ծրագիրներ: Ֆրանսան կը մնայ սպառազինուած, Անգլիա, Իտալիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Բելգիա — նմանապէս: Բոլոր պետութիւնները,

անգամ Միացեալ Նահանգները, կը շարունակեն աճեցնել իրենց բանակն ու զինաւորումը: Իսկ այդ նշան է, որ կատկածը, թերահաւատութիւնը, փոխադարձ անվստահութիւնը չեն վերացած, որ խաղաղութեան մեծ գործը դեռ չէ բազմած անասան պատուանդանի վրայ:

Կասկածը, թերահաւատութիւնը վերացած են արդեօք երկու մեծագոյն դաշնակիցներու՝ Անգլիայի եւ Ֆրանսայի միջեւ... Չենք կարծեր: Յաղթական պատերազմը վերջացաւ թէ չէ՝ Դաշնակիցներու բանակի մէջ իսկ ծայր տուաւ խորունկ պառակտումը:

Ֆրանսան, զարհուրած Անգլիոյ արեւելեան յաջողութիւններէն, սկսեց ամէն քայլափոխին թակարդներ լարել իր մեծ դաշնակիցի դէմ՝ ասոր արեւելեան քաղաքականութեան մէջ: Սիստեմատիկօրէն պաշտպան կանգնեց թիւրքական դատի՝ ընդդէմ Անգլիոյ եւ Յունաստանի:

Չմոռնանք, սակայն, որ պատերազմի ընթացքին թիւրք բանակին ամենէն ուժեղ հարուածողը նոյն Անգլիան էր եւ որ միւս ճակատներու վրայ եւս Մեծ Բրիտանիան իրօք հսկայական էր ոչ միայն իր նորաստեղծ բանակով ու անզուգական նաւատորմով — որու շնորհիւ Ամերիկան արագ-արագ փոխադրեց իր զօրքերը եւ վերջին հարուածը տուեց դերման ուժասպառ բանակին — այլ եւ Ֆինանսական անհատնում միջոցներով, որոնք շարունակ կը սնուցէին բոլոր Դաշնակից բանակները՝ Ֆրանսական, ռուսական, իտալական, սերբիական, ռումանական: Ֆրանսան եւս, անշուշտ, ինքնապաշտպանութեան տիտանեան ճիգեր ըրաւ:

Միանգամայն վճատեցուցիչ էր երկու մեծ դաշնակիցներու վերսկսող հակամարտութիւնը, մանաւանդ թիւրքիոյ հանդէպ, որը եւ շնորհիւ այդ հանգամանքի, վերակազդուրուեց ու նորէն սլացաւ Դաշնակիցներու դէմ... Անգլիան վրիժառու հարուածներ տուեց Ֆրանսային Արեւմուտքում, անողոք կերպով խեղդեց անոր պահանջկոտ ձայնը գերման Հատուցումներու խնդրին մէջ, որը ի վերջոյ դարձաւ ողբերգական Ֆրանսայի համար:

Հակամարտութիւնը դարաւոր էր եւ մէկէն ի մէկ չէր կարող չքանալ: Վրէժխնդրութիւնը, անշուշտ երկրորդական տեղ միայն ու-